

Ա. Ռ. Ա. Կ

—

Կ Ա Պ Ի Կ Ե Ի Ա Կ Ն Ո Յ .

Կապկին մէկը ծերացեր՝ աչքին զօրքն ալ պակսեր էր .

Բայց մարդկանցմէ լըսեր էր

Թէ այն չարն ալ ունի ճար :

Ճարն է ականոց գընել աչքին անպատճառ :

Կերթայ իրեն ականոց կառնէ հինգ վեց հատ .

Ասդիս անդին կը դարձընէ յուսահատ .

Մէյմը կառնու գըլխուն վըրայ կը դընէ ,

Անկից կիջնայ պոչին վըրայ կանցընէ ,

Կը հոտուըտայ ու կը լըղէ ապակին ,

Ակնոցէն շահ մը չը տեսներ իւր աչքին .

« Գետինն անցնի — կըսէ յանկարծ զայրագին —

« Խենդ է ով որ հաւտայ մարդկանց ըսածին .

« Ահա ինչ որ գովեստ ըսին ականոցի՝

« Սուտ է եղեր , ես ալ խենդ որ հաւտացի » :

Այս կըսէ կապկին ու ցաւով սըրտի

Այնպէս կը զարնէ ականոցը քարի

Որ ցըրեխ ցըրեխ խօկոյն կոտըրտի :

Մեղք որ շատ անգամ նաեւ մարդկանց մէջ այս կը պատահի .

Մէկ բան մը սրչափ օգտակար լինի եւ կամ գովելի ,

Տըգէան ու տըխմար անոր յարգն արժէքը չը գիտնալով

Միշտ վար կը զարնեն զայն յանիրաւի իրենց ծուռ խելքով .

Տէր մի արասցէ , թէ որ տըգէաներն ոյժ ալ ունենան՝

Բարւոյն փոխարէն չարիք չարչարանք՝ մեծ վընաս կուտան :

Ք Ռ Ի Լ Ո Վ :

